



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 22 Յունիսի յետմիջօրէին, ընդունեց այցելութիւնը Հայ Իրաւաբաններու Ընկերակցութեան վարչութեան անդամները, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած էին ծանօթացման եւ ծառայութեան

պատրաստակամութիւն արտայայտելու նպատակով: Առաջնորդ Սրբազանին կողքին, հիւրընկալ էր Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան: Պատուիրակութեան մաս կը կազմէին ատենապետը՝ Էտուին Միւսասեան, եւ անդամներ՝ Կարօ Ղազարեան, Նիկոլ Մանուկեան, Վիգէն Սիմոնեան, Սառա Պետիրեան, Արմէն Յովհաննիսեան ու Սարօ Բերքոնեան: Պատուիրակութեան կ'ընկերանար դատաւոր Զաւէն Սիւնսեան:

Հիւր ներկայացուցիչները ընդհանուր գիծերու մէջ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին ընկերակցութեան կազմութեան ու անցեալին տարած աշխատանքներուն ընդհանուր պատկերը, նշելով, որ ընկերակցութիւնը վերջին տարիներուն հետզհետեւ աւելի գործօն մասնակցութիւն կը բերէ հայութիւնը յուզող հարցերու ուսումնասիրութեան ու հետապնդման մէջ: Անոնք յայտնեցին, թէ ընկերակցութիւնը տրամադիր է խորհրդատուական եւ գործնական միջոցներով իր ծառայութիւնները տրամադրելու Ազգ. Առաջնորդարանին ու առհասարակ հայկական կազմակերպութեանց ու ժողովուրդին: Անոնք նաեւ անդրադարձան ցարդ կատարուած կարգ մը իրագործումներու, նշելով, որ ընկերակցութիւնը կը ծրագրէ այսուհետեւ աւելի եւս տարածել մեր ժողովուրդի ծառայութեան դաշտերը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկաները, դրուատիքով արտայայտուեցաւ անոնց ծառայական աշխատանքներուն ու մաղթեց, որ Ջայ Իրաւաբաններու Ընկերակցութիւնը իրականացնէ իր որդեգրած ուղղութիւնն ու առաջադրանքները՝ յօգուտ մեր ազգային կեանքին:

PRELATE WELCOMES ARMENIAN BAR ASSOCIATION BOARD OF DIRECTORS

On Tuesday, June 22nd, 2010, the Board of Directors of the Armenian Bar Association (ABA) visited the Prelacy where they were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian. The delegation was comprised of Executive Committee Chair Edvin Minassian, and members Garo Ghazarian, Nigol Manoukian, Vicken Simonian, Sara Bedirian, Armen Hovannisian, and Saro Kerkonian, and was accompanied by Judge Zaven Sinanian.

The guests gave a brief overview of the general mission of the ABA, noting that in recent years, a great deal of attention has been given to identifying and resolving issues of special concern the Armenian community. They also stated that the ABA is expanding its mission and is ready to offer legal assistance and services to the Prelacy, Armenian organizations, and the general population as needed.

The Prelate commended the members for their service and wished them success in their endeavors.